Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԱՆԱՎԱՐՏ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

Վարդգես Պետրոսյանի՝ 1963 թվականին հրատարակված պատմվածքների ժողովածուն, որը կրում է հիշյալ վերնագիրը, հենց սկզբից մտորում, նույնիսկ տարակուսանք է առաջացնում: Ինչո՞ւ անավարտ, ինչո՞ւ ոչ, ասենք, «Ամբողջական դիմանկարներ»: Չկա՞ այստեղ արդյոք այն վտանգավոր տատամսոտությունը, որն այնպես հատկանշական է իր ասելիքը մինչև վերջ չհստակած և իր խոսքը դեռ ըստ ամենայնի չամբողջացրած այն հեղինակներին, որոնք այնուամենայնիվ, ընթերցողին ներկայանալու վստահություն են ունենում: Պատասխանելու համար այս հարցադրմանը, պետք է գեթ համառոտակի քննության առնենք «Անավարտ դիմանկարներ» ժողովածուն:

Հեղինակին ճիշտ մեկնաբանելու համար բանալի է հանդիսանում պատմվածքներից մեկի հետևյալ տողերը. «... Իսկական մարդու կենսագրությունը կիսատ շենքի է նման. չի ավարտվում երբեք: Դու նայում ես այդ կիսատ շենքին, և սիրտդ ժպտում է կյանքի գույներով, որը վերջ չունի և չունի տանիք: Իսկական մարդիկ չեն հասնում տանիքին, որովհետև նրանց տանիքը երկինքն է, որին անհնար է հասնել: Իսկական մարդիկ բարձրանում են, իսկ երբ նրանք չեն լինում, բարձրանում են ուրիշները, որոնք գալիս են հետևից...»:

Քառասուն տարուց ավելի է, ինչ մեզ մոտ ստեղծվել է մարդկության պատմությանը առ այսօր անհայտ մի համակարգ, իր նոր, դեռ մինչև վերջ չբացահայտված ներքին օրինաչափություններով, զարգացման միանգամայն ուրույն տրամաբանությամբ, և այստեղից բխող աշխարհընկալման ամբողջովին նոր սիստեմով: Անճանաչելիորեն փոխվել է երկիրը, փոխվել են քաղաքներն ու ավանները, շրջանները, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, փոխվել են, և թերևս սա ամենակարևորն է, մարդիկ: Նոր մարդիկ, այսինքն՝ այն սերունդը, որը հիմա պատանեկան տարիքի է, ունի հետաքրքրությունների, որոնումների, ձգտումների, տենչանքների իր ասպարեզը:

Դժվար է տեսնել այդ մարդկանց, առավել ևս դժվար է բացահայտել նրանց: Դժվար է նախ այն պատճառով, որ նրանք մշտապես մեր շրջապատում են, ոչինչ շշմեցնող և զարմանալի չունեն իրենց մեջ: Եվ երկրորդ, այդ մարդիկ դեռ ծավալուն պատմություն չունեն, չունեն մեծ ու խոր անցյալ, ինչ այնքան հատկանշական է 20-ական թվականների սերնդին, չունեն կենսագրություն, այս հասկացողության չոր-անկետային իմաստով, և որպես ձևա–

վորված անհատականություններ, վերջին հաշվով, դեռևս «անավարտ» են: Բայց միաժամանակ դրանք այն մարդիկ են, որոնք գրոհում են տիեզերքն ու նվաճում խոպանը, փոխում են երկրի դեմքն ու անապատները վերածում ծաղկուն մարգագետինների, նոր ուղղություն են տալիս լայնահուն գետերին: Այս բոլորի միասնությունն է պատճառը, որ խիստ դժվար է բացահայտել հիշյալ անձանց և պատահական չէ, որ սովետահայ գրականության անդաստանում այդքան քիչ են գեղարվեստորեն հաջողված ստեղծագործությունները կյանքով, հուզումներով ու ձգտումներով լի մեր երիտասարդության մասին: Վարդգես Պետրոսյանը համարձակորեն առաջնորդում է մեզ դեպի նմանատիպ մարդկանց միջավայր, և «Անավարտ դիմանկարների» ընթերցողն աստիճանաբար ծանոթանում է էքսկավատորավար Մերիի, երկրաբան-ինժեներ Ղազարյանի ու նրա կենսափիլիսոփա ընկերոջ, մշտապես անհանգիստ ու որոնող Արամի, բնությանը սիրահար ու հայկական բնաշխարհով հիացած դատավորի, հիվանդանոցում պառկած երեք անհատականությունների ու նրանց խնամող Նելլիի, Սեդայի և նրա սիրո հետ խաղացող երիտասարդի և շատ ուրիշ հետաքրքրական կերպարների հետ: Ընդգծելու արժանի մի հանգամանք. «Անավարտ դիմանկարների» գործող անձանց անվիճելիորեն գերակշիռ մասը պատանեկան, երիտասարդական տարիք ունի և սա այն դեպքում, երբ նրանց հեղինակը՝ Վարդգես Պետրոսյանը, ինքն էլ երեկ-առաջին օրն է դուրս եկել այդ տարիքից: Սա է կարևոր պատճառներից մեկը, որ հեղինակը չափազանց շատ բան գիտե այդ տարիքի երիտասարդության մասին, նախանձելի բծախնդրությամբ ուսումնասիրել ու քննել է նրանց և կարողացել է բնորոշ մանրամասներ հայտնաբերել, որոնել հատկանշական երանգավորումներ, որոնք, քիչ ավելի մեծ տարիքի հեղինակի համար, և սա կարելի է վստահորեն ասել, անմատչելի կլինեին: Ակամայից հիշում ես Վ. Բելինսկու հայտնի խոսքերը. «Լավ է, երբ գրողն ուսումնասիրում է այն միջավայրը, որի մասին գրելու է ինքը: Բայց անհասանելիորեն լավ է, երբ գրողը հասակակիցն ու տարեկիցն է այն միջավայրի, որի մասին էլ գրելու է:

Նյութի քաջատեղյակությունը, կերպարների խոր և մանրակրկիտ անալիզն իր հետ բերել է «Անավարտ դիմանկարներին» բնորոշ մի հիշատակելի առանձնահատկություն էլ: Հեղինակն առաջ է քաշում ինքնուրույն հարցեր, երևույթները քննում է իր հասկացողություններով ու ըմբռնումներով, փաստերն իմաստավորում և մեկնաբանում է բացարձակապես անկախ որևէ նախնական սխեմայից և նախօրոք տրված պայմանականության, միայն իր սեփական ընկալումների համաձայն: Խրախուսելի այս ինքնուրույնությունը անչափ բարձրացնում է «Անավարտ դիմանկարների» գեղարվեստական հավաստիականու–

թյունը, այն դարձնում է թարմ և ընթերցելի գիրք: Հեղինակին խորապես հուզում է և՛ Սեդայի տրորված սերը («ՈՒրիշի գարունը»), և՛ կյանքում «նստած մեռնել» երազողի ողոր–մելի փիլիսոփայությունը («Մարդու ճանապարհը»), և՛ բթամիտ դատարկապորտության սեթևեթանքները («Բարի լույս, Ջեկ, ինչպե՞ս անցավ գիշերը»), և գեղեցիկ աշխատանքի ամենափրկիչ ուժը («Մեհրաբի աբյուրը») և երիտասարդ կյանքի մեծ հերոիկան՝ իր սխրանքներով ու խենթություններով («Մամա, ես արդեն մեծացել եմ») և այլն, և այլն:

Պատմվածքների հերոսները վերցված են այսօրվա կյանքից ու իրադարձություննե–րից, և միանգամայն գիտակցաբար է հեղինակն արծարծում այսօրվա հարցերը, քննում խնդիրները, պահանջներն ու այսօրվա մարդկանց: Այս իմաստով Վարդգես Պետրոսյանը, եթե կարելի է այսպես ասել, ամենաառօրեական այն գրողն է մեր բոլոր երիտասարդ ստեղծագործողների մեջ, ով մատը դրած կյանքի զարկերակին՝ ամեն վայրկյան արձա–գանքում է նրա բոլոր բաբախումներին: «Անավարտ դիմանկարների» առավելություններից մեկն էլ այն է, որ քննելով մասնակին, քննելով կոնկրետը, հեղինակը կարողացել է դրա միջոցով արտացոլել ընդհանուրը, կարողացել է փոքրի մեջ հմտորեն խորացնել մեծը և իր հերթին մեծը քննել փոքրի տեսանկյունից: Թե՛ աշխարհագրագետ Հրաչիկ Գաբրիելյանը իր զարմանահրաշ կյանքի անհավատալիորեն հերոսական դրվագներով («Ինչ արժե մարդու ժպիտը»), թե՛ նորադուզցի կոմբայնավար Վարազդատ Ստեփանյանը («Կոմբայնավարը այնպես, ինչպես որ կա»), թե՛ ուրիշի հիվանդին փրկելու համար իրեն զոհաբերած բժիշկ Նասիբյանը («Վերջին գիշեր») և թե՛ «Անավարտ դիմանկարների» մյուս հերոս-հերոսուհի–ները կոնկրետ են, իրական ու ռեալ այնպես, որ ասես մի քանի բոպե առաջ են կյանքից մտել գրքի էջերի մեջ: Բայց այդ կոնկրետության մեջ հեղինակը հաջողությամբ կարողացել է խորացնել այն մեծ, առաջատար գաղափարները, ժամանակակից կյանքի առաջմղիչը հանդիսացող այն անկրկնելի հերոսականությունը, որոնք այնքան հատկանշական են մեր օրերի մարդուն: Սրանում է գրքի մյուս անժխտելի առավելությունը:

Իհարկե Պետրոսյանը չի նպատակադրվել իր «Անավարտ դիմանկարներում» միայն օրհներգություններ կարդալ ու փառքի դափնիներ հյուսել երիտասարդ սերնդին: Նա գիտե, որ այդ սերնդի ներկայացուցիչների մեջ ամենևին էլ հազվագյուտ չեն մարդիկ, որոնք իրենց հոգևոր դատարկությունն աշխատում են քողարկել չափից ավելի նեղ տաբատներով, զար–մանալիորեն գունավոր վերնաշապիկներով ու սրածայր մոկասիններով, կամ կյանքի գե–րագույն նպատակը համարում են «մեջքը փողոցի հեռագրասյանը տված՝ հոգով ծերա–նալը»: Կան այդպիսիններն էլ. նրանց նվիրված ստեղծագործությունները, որոնք, ի դեպ,

գրքում շատ քիչ են, և հատկապես «Բարի լույս, Ջեկ, ինչպե՞ս անցավ գիշերը» պատմվածքը կարելի է ժողովածվում զետեղված բոլոր պատմվածքներից լավագույնը համարել: Այս դեպքում էլ Պետրոսյանը կարողացել է մանրամասնորեն քննել բոլոր այդ ջեկերի, թոմերի, հենրիների, ալանների, աղաների, վիուլների ներքին ողջ սնամեջությունը: Եվրոպական մո–դայիկ անուններով պաճուճված կամ իրենց ազգային անունները «եվրոպավարի» ձևափո–խած (պատմվածքներից մեկի հերոսուհին, Շուշանիկը, օրինակ, խորապես վիրավորվում է, երբ այդպես են կոչում իրեն և հետևողականորեն պահանջում է իրեն դիմել «Սյուզի» ձևով) գեղատեսիլ անպետքություններ են սրանք, որոնց հանրօգուտ ամբողջ գործունեությունը, թեկուզ իրենց քաղաքի համար սոսկ այն է, որ «այնտեղ իրենք միայն ծնվել են»:

Հարց է ծագում, իսկ դրանք՝ այդ թոմերն ու վիուլները բնորո՞շ են մեր կյանքին, մեր կենցաղին ու իրականությանը: Պետրոսյանը վստահորեն պատասխանում է. ո՛չ: Ճիշտ է, մեր կյանքում կան վիուլներ ու աղաներ, նրանք մեր շուրջն են, մեր միջավայրում, քայլում ու խոսում են մեզ հետ, բայց մեր կյանքը նրանցով չի սահմանափակվում և առավել ևս՝ նրանցով չի պայմանավորվում: Հեղինակը կարողանում է համոզել իր ընթերցողներին, որ մեր իրականությունը բնորոշվում է Հրաչիկ Գաբրիելյաններով, որոնք լավ գիտեն, թե ինչ արժե կյանքը և ճիգ ու ջանք չեն խնայում այն է՛լ ավելի գեղեցիկ դարձնելու և, հետևաբար, թոմերին ու վիուլներին ասպարեզից օր առաջ շուտ վտարելու համար: Այդ մարդիկ են, որ կազմում են մեր հասարակական կյանքի հիմնական բովանդակությունը, որոնք վճռակա–նորեն ձև և ուղղություն են տալիս նրան: Չի կարելի չհամաձայնել հեղինակի հետևյալ տե–սակետի հետ, որը ի դեպ, տարբեր առիթներով նորից ու նորից է արծարծվում. «Իսկական մարդու կենսագրությունը ... չի ավարտվում երբեք...»:

Մի քանի խոսք էլ հեղինակի ոճի մասին:

Վերջին շրջանի մեր գրականության մեջ և, մանավանդ, երիտասարդ գրողների մոտ նկատվում է այսպիսի խոցելի մի միտում. գրելիս հաստատուն կերպով չանել այն, ինչ արել են մեր դասականները, նրանց հայտարարել «հնացած» և անպայման գրել յուրօրինակ ոճով ու հետևաբար յուրօրինակ մտածողությամբ: Ընթերցողին մնում է սոսկ սարսափահար թպրտալ ետևառաջ մտքերի, ձախուծուռ նախադասությունների, դժվարամարս, հաճախ էլ պարզապես անմարսելի արտահայտությունների ծանրումեծ կուտակումների օվկիանո–սում: Վարդգես Պետրոսյանը զգուշորեն ընտրել է միջին գիծը, կարողացել է հիմնականում խուսափել գրական այդ արկածախնդրությունից և միաժամանակ տեղին ու ճաշակով կի–

բառել նորամուծություններ, որոնք աշխուժություն ու թարմություն են հաղորդում ժողո–վածուի պատմվածքներին: Միայն կամենում ենք նախազգուշացնել երիտասարդ արձա–կագրին, որ հետագայում նա չկորցնի չափի ու տակտի զգացումը, հաստատուն կերպով կարողանա պահպանել ստեղծագործական այն նվաճումը, որին կարողացել է հասնել նշված գրքում:

Ամփոփենք:

Նոր երիտասարդությունը իր հուզումներով ու ապրումներով, նոր ձգտումներով ու առօրյայով, – ահա Վարդգես Պետրոսյանի հետաքրքրությունների շրջանակը, որ գերա–զանց կերպով արտացոլվել է «Անավարտ դիմանկարներ» գրքում: Թո՛ղ, որ հեղինակը հա–ճախ չի կարողանում կողմնորոշվել երիտասարդների նոր ու բարդ հարաբերություններում («Իսկ ես դեռ ջրում եմ քո ծաղիկները»), կամ առաջարկում է ոչ այնքան համոզիչ դեղա–տոմսեր («Իմ ամենավերջին խաղալիքը»), ի դեպ նշենք, որ այնքան էլ հեշտ չէ այդ բարդ հարցերին ճշգրիտ պատասխաններ տալը: Բայց որ հեղինակը կանգնած է ճիշտ ուղու վրա, հարցերը պատկերացնում, առաջադրում ու լուծում է հիմնականում ճշմարտացիորեն, – այս կապակցությամբ որևէ տարակույս կամ առարկություն լինել չի կարող: Մնում է միայն ցանկանալ, որ հեղինակը վստահորեն ընթանա այդ նոր ու չտրորված ուղիով և կյանքն ու մարդկանց պատկերի նորանոր «Անավարտ դիմանկարներով», որի կարիքն այնպես զգալի է առանձնապես երիտասարդության համար:

Ավանգարդ

1963, հուլիսի 20, № 87